ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 սեպտեմբերի 2023 թվականի N 366-Ա

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐԱՄ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱՂԱԼՈՅԱՆԻ, ԻՆՆԱ ԲԱԼԱՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2335-Ն և 2018թ. նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին, մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Արամ Շահնազարյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Սամվել Աղալոյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Իննա Բալայանին և փորձագետ Մարգարիտա Մանուկյանին, Տոյոտա Քամրի մակնիշի 060 CA 61 պետհամարանիշի ավտոմեքենայով, 2 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 26-ից 27-ը գործուղել Գորիսի կոորդինացիոն կենտրոն՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակիչների կարիքների առաջնային հաշվառման և գնահատման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

2. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

3. Ի. Բալայանին, Ա Շահնազարյանին, Ս. Աղալոյանին և Մ. Մանուկյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 26
ք. Կապան